ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2003 թ. փետրվարի -ի նիստի

Նախագահում էր՝
Ա.Մարգարյան - ՀՀ վարչապետ
Մասնակցում էին՝
Մ. Թոփուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար- նախարար
Տ. Սարգսյան - ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
Կ. Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ
Լ. Մկրտչյան - ՀՀ կրթության և գիտության նախարար
Ա.Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Հրավիրյալներ՝
Գ.Հարությունյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
Մ.Մկրտչյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի տեղակալ
Ս.Սեյրանյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի տեղակալ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի ՀՀ պետական բյուջեից հատկացված աջակցության գումարների հաշվին վարչակառավարչական ծախսեր կատարելու թույլտվության և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Գարեգին Նժդեհի 23 հասցեում գտնվող վարչական շենքի շինարարական վերանորոգման աշխատանքների մասին

(Ս.Սեյրանյան, Մ.Մկրտչյան, Գ.Հարությունյան, Ա.Ավետիսյան, Լ.Մկրտչյան, Կ.Կիրակոսյան, Մ.Թոփուզյան, Տ.Սարգսյան, Ա. Մարգարյան)

1. Համաձայնել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի առաջարկությանը և, ՀՀ պետական բյուջեից տրված աջակցության գումարները դիտարկելով որպես «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի սեփականություն, ըստ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի, թույլատրել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին ՀՀ բյուջեից տրված գումարների հաշվին կատարելու «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի աշխատողների աշխատավարձի վճարումը, ինչպես նաև հիմնադրամի մարմինների անդամների

պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթակա ծախսերի (վարչակառավարչական ծախսեր) կատարումը։

2. Հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ 2002թ. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կողմից Գարեգին Նժդեհի 23 հասցեում գտնվող շենքի շինարարական վերանորոգման աշխատանքների կատարման համար անցկացրած շինարարական կազմակերպության ընտրության մրցույթում հաղթող ճանաչված «Հրազդան-6» ՓԲԸ-ի հետ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կնքած պայմանագրին համապատասխան 2002թ. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Գարեգին Նժդեհի 23 հասցեում գտնվող վարչական շենքի շինարարական վերանորոգման կատարված աշխատանքները համարել բավարար։
3. Թույլատրել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին՝ 2002թ. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կողմից Գարեգին Նժդեհի 23 հասցեում գտնվող վարչական շենքի շինարարական վերանորոգման աշխատանքների կատարման համար շինարարական կազմակերպության ընտրության մրցույթում հաղթող ճանաչված «Հրազդան-6» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիրը երկարաձգելու 2003թ.-ի համար՝ պայմանագրում նախատեսված և դեռևս չկատարված աշխատանքները 2003թ.-ին շարունակելու համար։

ՀՀ վարչապետ՝

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ Ա. Մարգարյան